«ՆՈՐ ԱՐԱԲԿԻՐ ՏԵՂԵԿԱՏՈՒ»-Ն ԱՄԵՐԻԿԱՀԱՅ ԱՐԱԲԿԻՐՑԻՆԵՐԻ ՄԻՈՒԹԵԱՆ ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԹԵՐԹ

Մերի Սամուելի Աւետիսեան

Երեւանի Արաբկիր վարչական շրջանը 100 տարեկան է, եւ Երեւան քաղաքի պատմութեան թանգարանը իրեն վերագրուած գործառոյթի շրջանակում նախատեսում է տարեվերջեան ցուցադրութեամբ նշանաւորել քաղաքի առաջին աւանի հիմնադրման յոբելեանը: Դեռեւս տարեսկզբին ՀՀ Ազգային արխիւում մեկնարկած ուսումնասիրութիւնների արդիւնքում հաւաքագրուած նիւթը բաւական էր մեկ թեմատիկ ցուցահանդէս կազմակերպելու համար, որն առաւել ամբողջական դարձաւ ՀՀ Ազգային գրադարանում պահպանուող «Նոր Արաբկիր տեղեկատու» թերթի ուսումնասիրութեան արդիւնքում: Ամերիկայի Միացեալ Նահանգներում սաղմնաւորուած եւ Խորհրդային Հայաստանում ծնունդ առած արաբկիրցիների վերաբնակեցման գործընթացի մասին պատմող թերթը բովանդակային եւ զգայական տեսանկիւնից դարձաւ հայրենադարձ մեր ազգակիցների ապրումների, յոյզերի վաւերագիրը: Արժեւորելով նորագոյն պատմութեան այս կարեւոր շրջափուլի մասին պատմող «Նոր Արաբկիր տեղեկատու»-ի որպէս Հայաստան-սփիւռք համագործակցութեան օղակ կատարած առաքելութիւնը, հարկ ենք համարում առանձին ուսումնասիրութեամբ անդրադարձ կատարել թերթի գործունէութեանը:

Ուսումնասիրութեան նպատակն է Խորհրդային Հայաստանում արաբկիրցիների վերաբնակեցման եւ Նոր Արաբկիր աւանի կառուցման գործընթացները դիտարկել ըստ «Նոր Արաբկիր տեղեկատու» թերթում տպագրուած նիւթերի: Խնդիր է դրուել «Նոր Արաբկիր տեղեկատու» թերթի օրինակով ցոյց տալ 1925թ. Խորհրդային Հայաստանում մեկնարկած արաբկիրցիների հայրենադարձութեան թեմայի ուսումնասիրութեան համար մամուլի գործունէութեան դերն ու կարեւորութիւնը: Թերթում տպագրուած նիւթերի միջոցով երեւան հանել 1920-ականներին Մայր Հայաստանում քաղաքական, պատմական, մշակութային տրամադրութիւնները, որոնց ներքոյ խմորւում էր հայրենադարձների վերաբնակեցման գործընթացը: Ուշադրութեան է արժանի նաեւ տեղեկատուի փոխանցած ազգագրական, բանահիւսական հսկայածաւալ նիւթը, ինչը թոյլ է տալիս ընդգծել արաբկիրցիների մշակութային առանձնայատկութիւնները կապուած կենցաղավարման, ազգային հագուստի, ծիսատօնական համակարգի մասին:

Թեմայի ուսումնասիրութեան համար հիմք են հանդիսացել ՀՀ Ազգային գրադարանում պահպանուող «Նոր Արաբկիր տեղեկատու» թերթի 1925-1983թթ. տպագրուած համարները:

1925թ. մայիսի 29-ին Նոր Արաբկիր աւանի հիմնադրեքով Խորհրդային Հայաստանում մեկնարկեց գաղութահայութեան եւ մայր Հայաստանի միասնականութեան ու համագործակցութեան արդիւնքում ձեւաւորուած մի գործընթաց, որը յետագայում ստացաւ «Դէպի հայրենիք շարժում»[1] ձեւակերպումը: Ըստ էութեան գա-

1 Նոր Արաբկիր տեղեկատու, ԻԱ տարի, դեկտեմբեր, թ.28, Նիւ Եորք, 1946 թ., էջ 583:

ղութահայութեան վերաբնակեցումը Խորհրդային Հայաստանում միայն քաղաքական գործընթաց չէր, այլ հասուն գիտակցութեամբ եւ ազգային գաղափարախօսութեան յենքով ձեւաւորուած շարժում, որն իրական պատնէշ դարձաւ գաղութահայութեան պատմութեան ու մշակոյթի ձուլման վտանգի դէմ: Այսօր, արդէն անկախ Հայաստանի մայրաքաղաք Երեւանի հիւսիսային մասում է գտնւում Արաբկիր վարչական շրջանը, որի հարիւրամեակին էլ նուիրուած է սոյն ուսումնասիրութիւնը: Նոր Արաբկիր աւանի հիմնադրեքին զուգահեռ տեղի ունեցաւ մեկ այլ կարեւոր իրադարձութիւն՝ «Նոր Արաբկիր տեղեկատու» թերթի հրատարակումը: Անհրաժեշտութիւն կար ստեղծել աշխարհասփիւռ արաբկիրցիներին հասու տեղեկատուական մի հարթակ, որի միջոցով հասարակութեան լայն շերտերի իրազեկումը առաւել համակարգուած կը դարձնէր հայրենիք վերադարձի շարժումը:

Թերթի առաջին համարը լոյս է տեսել 1925թ. դեկտեմբերին Նիւ Եորքում՝ Ամերիկահայ արաբկիրցիների միութեան նախաձեռնութեամբ[2]: Տեղեկատուն դարձաւ Արաբկիրի միութեան պաշտօնական թերթը, որի առաջին համարում[3], խմբագրութեան հրատարակուած խօսքից տեղեկանում ենք, որ այն որեւէ նիւթական շահոյթ չի հետապնդել եւ ստեղծուել է բացառապէս Ամերիկայում եւ այլ գաղութներում ապրող արաբկիրցիներին «Նոր Արաբկիր» նախաձեռնութեան աշխատանքների մասին իրազեկելու նպատակով, իսկ հրատարակութեան ծախսերի համար խմբագրակազմը ընդունել է հանգանակութիւններ, ինչի մասին թերթի իւրաքանչիւր համարում հաշուետու է եղել իր ընթերցողներին: Թերթի առաջին խմբագիրը Նշան Էժտահարեանն էր:[4] Իր շուրջ յիսունհինգ տարիների գոյութեան ընթացքում, թերթը տպագրուել է Միութեան նստավայրերում՝ Նիւ Եորքում, Բոստոնում, Ֆիլադելֆիայում, Ուոթերթաուընում, Փենսիլուանիայի որոշ քաղաքներում: Տարբեր բաժիններից բաղկացած թերթը տեղեկութիւններ է փոխանցում Նոր Արաբկիր աւանի շինարարութեան ընթացքի, միութեան պատգամաւորական ժողովների արձանագրութիւնների, Ամերիկայում արաբկիրցիների միութեան գործունէութեան, Խորհրդային Հայաստան այցելած սփիւռքահայ գործիչների տպաւորութիւնների, Գաղթավայրերում եւ Խորհրդային Հայաստանում վերաբնակեցուած արաբկիրցիների կեանքի եւ կենցաղի մասին: Թերթի անցած ճանապարհը հարթ չի եղել: 1951 թ. 37-րդ համարում նշանաւորելով տեղեկատուի գոյութեան քառորդ դարը, խմբագրակազմն արձանագրում է, որ տեղեկատուի ստեղծումը սպասուած ոգեւորութեամբ չի ընդունուել: Որոշ շրջանակներ նոյնիսկ թերթի ստեղծման համար արուող ծախսերը որակել են նիւթական միջոցների մսխում: Քիչ չեն եղել նաեւ հրատարակութիւնների համար անհրաժեշտ ֆինանսական եւ տեխնիկական պայմանների սղութիւնը, որի ապահովումը իրականացւում էր խմբագրակազմի

2 Ամերիկայի արաբկիրցիների միութիւնը ձեւաւորուել է Ֆիլադելֆիայում 1900-ական թուականներին՝ որպէս որբախնամ, յետոյ՝ ուսումնասիրաց և վերաշինաց նպատակներով: Միայն 1922-ին այն անուանակոչուեց Ամերիկահայ արաբկիրցիների միութիւն: 1923թ. մայիսի 27-30ը տեղի ունեցած պատգամաւորական արտահերթ ժողովը հաստատեց Ամերիկահայ արաբկիրցիների միութեան ձեւաւորումը, որի նպատակն էր նիւթապէս և բարոյապէս օգնել Արաբկիրի հայոց կրթական գործին և Արաբկիրում ապրող կամ գաղթական հայրենակիցներին:

3 Նոր Արաբկիր տեղեկատու, Ա տարի, դեկտեմբեր, թ.1, էջ2:

4 Ա. Փոլատեան, *Պատմութիւն հայոց Արաբկիրի*, Նիւ Եորք, 1969, էջ 880:

յամառ աշխատանքի արդիւնքում: Չնայած կատարուած հետեւողական աշխատանքին, այնուամենայնիւ տեղեկատուի 1974 թ. 80-րդ համարում տպագրուած միութեան կենտրոնական վարչութեան յայտարարութիւնից պարզւում է, որ 1973 թ. համարը լոյս չի տեսել թղթի եւ այլ անհրաժեշտ միջոցների սղութեան պատճառով: Չի ուշանում պատգամաւորական 47-րդ համագումարի արձանագրութիւնը, որի մէջ յիշատակւում է թերթի հրատարակութեան շարունակականութիւնը յանձն առած նոր կազմակերպութեան մասին:[5] Վերսկսուող հրատարակութեան լուրը եւ հերթական տպագրուած համարները մեծ ոգեւորութեան ալիք են բարձրացնում: Խմբագրութիւնը ստանում է հարիւրաւոր նամակներ, շնորհակալագրեր, երախտիքի խօսքեր, որոնք տպագրւում են տեղեկատուի յաջորդ համարներում:[6] Խմբագրութեան ստացած նամակներում շեշտւում է «Նոր Արաբկիր տեղեկատու»ի գոյութեան կարեւորութիւնը մասնաւորապէս այն համարելով հայրենիք - սփիւռք կապը ջերմացնող կարեւոր շղթայ: «...Ան կը շաղկապէ մեզ մեր նոր հայրենի աշխարհին, ինչպէս նաեւ կը յիշեցնէ մեզի մեր նախկին հայրենիքը եւ հոն ապրող անբախտ հայրենակիցները...: ... Նոյնքան հետաքրքրական է «Տեղեկատու»ի բովանդակութիւնը. արաբկիրցի հայրենակիցներու հին եւ նոր կեանքէն գրութիւններ եւ տեղեկութիւններ գործունէութեանց մասին, ըլլայ սփիւռքի մէջ, ըլլայ Սովետական Հայաստանի մէջ: «Տեղեկատու»ն պէտք է քաջալերուի նուիրատուութիւններով եւ գործնական աջակցութեամբ» ասւում է նամակագիրների շնորհաւորանքի խօսքում: Յետագայում միջոցների խնայողութեան նպատակով որոշում է կայացւում թերթը հրատարակել տարին մեկ անգամ միացեալ հրատարակութեամբ: Այսօր ՀՀ Ազգային գրադարանում պահպանւում եւ ուսումնասիրութեան համար հասանելի են 1925-1983թթ. թուագրուած «Նոր Արաբկիր տեղեկատու» թերթի համարները:

Յատկապէս խորհրդանշական է թերթի առաջին համարում տպագրուած ամերիկահայ արաբկիրցիների միութեան կողմից Երեւան ուղարկուած երկու անդամների՝ Մկրտիչ Ղազիկեանի եւ Միսակ Վարդանեանի հեռագիրը կառուցուելիք աւանի թամանեանական յատակագիծը եւ Հայաստանի կառավարութեան հետ կնքուած պայմանագրի գլխաւոր կէտերը, ըստ որի Երեւանի, Քանաքեռի, Հրազդան գետի եւ Գետառի միջեւ գտնուող տարածութիւնից 610 դեսեատին հողամաս պէտք է յատկացուի Ամերիկայի արաբկիրցիների միութեանը «Նոր Արաբկիր» անունով քաղաք հիմնելու համար, իսկ միութիւնը իր հերթին պարտաւորուում է քաղաքի կառուցումը իրականացնել Ալեքսանդր Թամանեանի յատակագծով պահպանելով Երեւան քաղաքի յատակագծի սահմանները: Պայմանագրի յաջորդ կէտերով ամրագրւում է նաեւ, որ Նոր Արաբկիրում վերաբնակեցուած գաղթականները (բացի իրենց միջոցներով Հայաստան եկածներից) երեք տարով պէտք է ազատուեն բոլոր հարկերից եւ տուրքերից, իսկ բնակիչների մասին կայացուելիք որոշումները պէտք է լինէին Ամերիկայում արաբկիրցիների միութեան համաձայնութեամբ: Երեւանի քաղաքային գործադիր կոմիտէի եւ միութեան վերը յիշատակուած անդամների կողմից վաւերացուած այս պայմանագիրը հաւանութեան է արժանանում նաեւ Ամերիկահայ արաբկիրների միութեան կողմից եւ որոշում է կայացւում առաջինը հայրենիք ուղարկել առաւել կարիքաւորներին հոգալով նրանց

5 Նոր Արաբկիր տեղեկատու, 49 տարի, մայիս 1974, թ.80, Վաթերթաուն, էջ2:

6 Նոր Արաբկիր տեղեկատու, 52տարի, մայիս 1977, թ.83, Նիւթաուն, էջ 12-13:

ճանապարհածախսը: Թերթի առաջին համարի հրատարակութիւնը տարագիր արաբկիրցիների համար դարձաւ աւետիս եւ հայրենիք վերադարձի յոյս: «Նոր Արաբկիր տեղեկատու»ի նիւթերը Խորհրդային Հայաստանում Նոր Արաբկիրի կառուցման եւ գաղթականութեան վերաբնակեցման մասին այնքան ոգեւորիչ էին, որ արձագանք գտան աշխարհի տարբեր ծայրերում տպագրուող հայկական թերթերում: Յետագայում «Նոր Արաբկիր տեղեկատու»-ն «Մամուլի կարծիքները մեր ձեռնարկի մասին» գլխագրի ներքոյ սկսեց հրատարակել «Նոր Արաբկիր» նախաձեռնութեան մասին մամուլի արձագանքները: Այսպիսին էր Փարիզում տպագրուող «Երեւան» եռօրեայ թերթի անդրադարձը. «վերին աստիճանի քաջալերական է Նոր Արաբկիրի օրինակը: Ահա գործ մը եւ ստացուած դրական արդիւնք մը, որ որպէս օրինակ կրնայ ծառայել մնացած Հայրենակցական միութիւններու»: Իսկ Աթէնքի «Արձագանք»ը, որպէս յաղթանակ որակելով արաբկիրցիների հայրենիք վերադառնալու կամքը, գրել է «... զօրաւոր կամքը յաղթանակեց. Հպարտ է Արաբկիրի Հայրենակցականը կը հպարտանայ եւ կը գնահատէ նաեւ գաղութահայ աշխատաւորութիւնը գերազանցապէս այս վերաշինական աշխատանքները մեր երկրին մէջ իրականացնելուն առթիւ»[7]:

Նորակառոյց աւանի հիմնադրման տարելիցներին նուիրուած տեղեկատուի հրատարակութիւնները կատարուած աշխատանքների եւ ապագայի ծրագրերի իւրատիպ հաշուետուութիւններ են յիշեցնում: Այդպիսին է տեղեկատուի 1945թ. 26-րդ համարը՝ նուիրուած Նոր Արաբկիրի հիմնադրման 20-ամեակին եւ Հայաստանում Խորհրդային կարգերի հաստատման 25-ամեակին: Յոբելեանական այս համարի տիտղոսաթերթի ձեւաւորման հեղինակը թերթի առաջին խմբագիր եւ Ամերիկահայ արաբկիրցիների միութեան անդամ Նշան Էժտահարեանն էր: Այս համարի «Վերատպումներ երեկէն» խորագրի ներքոյ տպագրուած նիւթը վերյուշ է Նոր Արաբկիրի հանդիսաւոր հիմնադրեքի՝ զուգորդուած Խորհրդային Հայաստանին ուղղուած երախտիքի խօսքով: Իսկ որպէս 20 տարիների արուած աշխատանքի ամփոփում թերթն արձանագրում է. «Երեւանից վերեւ, ընդարձակ ու ամայի մի տեղ հիմք դրուեց Նոր Արաբկիրը: Արծաթէ տախտակի վրայ գրուեց հիմնադրման պատմութիւնն ու առաջին հիմնաքարերի հետ տեղադրուեց կառուցուող առաջին չէնքի դեղատան պատին: Եւ ահա 1927թ. սկսուեց ներգաղթը: Աստիճանաբար կառուցուեցին բնակելի տներ, մսուր-մանկապարտէզ, բուժկէտ, «Արաբկիր» արտելի կորպուսները, ջրմուղ, կամուրջ, Արաբկիրը Երեւանին միացնող խճուղի: Հիմա՝ հիմնադրման 20-րդ տարում, Արաբկիրն ունի 20 000 բնակչութիւն, որից 3000-ը բնիկ արաբկիրցիներ են»:[8] Կրկնակի յոբելեանական էր նաեւ 1950թ. 35-րդ համարը՝ նուիրուած միութեան 50-րդ եւ Նոր Արաբկիրի 25-ամեակներին, որտեղ միութեան գլխաւոր վարչութեան կողմից տպագրուած յօդուածը յետահայեաց անդրադարձ է միութեան 25 տարի առաջ կայացրած որոշման, որում ասւում է. «Այսօր, աւելի քան երէկ համոզուած ենք, որ մեր 25 տարի առաջ արած քայլը, որ շատ յանդուգն էր թւում, ճիշտ էր, որի համար մենք շատ ուրախ ենք եւ հպարտ: Որի մասին պէտք է յիշուի եւ խօսուի դարեդար, որի մասին արաբկիրցին պիտի պատմի իր զաւակներին, թոռներին, թոռան թոռներին»:[9] Այս համարում տպագրուած ֆրան-

7 Նոր Արաբկիր տեղեկատու, Գ տարի, օգոստոս, թ.7, Նիւ Եորք, 1929, էջ102:

8 Նոր Արաբկիր տեղեկատու, Ի տարի, Նոյեմբեր, հ. 26, Նիւ Եորք, 1945, էջ 505:

9 Նոր Արաբկիր տեղեկատու, ԻԶ տարի, դեկտեմբեր, հ. 35, 1950, Ուոթերթաուն, էջ1005:

սահայ մեկ այլ գաղթականի յուշերից տեղեկանում ենք, որ Արաբկիրն ընդարձակւում է, արդէն ունի 6000 բնակիչ: Մանուածքի եւ հիւսուածքեղէնի արհեստը մեծ թափով զարգանում է, եւ Նոր Արաբկիրը 25 տարուայ ընթացքում երկու անգամ աւելի բազմամարդ է դարձել, քան Հին Արաբկիրն էր: Ֆրանսահայ գաղթականների առաջին խումբը Խորհրդային Հայաստան եկաւ 1936 թ., որի մասին պատմող տեղեկատուի 1936 թ. 22-րդ համարում տպագրուած յօդուածում պատկերաւոր ներկայացուած են Հայրենիք վերադարձող Ֆրանսահայերի ոգեւորութիւնն ու յոյզերը, որ տօնական շունչ էին հաղորդել Մարսելին: Ներգաղթեալներին տեղափոխող «Սինայիա» շոգենաւի վրայ ծածանւում էր «Վիւ լա Ֆրանս, Վիւ լարմենի Սովէթիք» դրութեամբ պոստեռը, Ֆրանսիական եռագոյնը եւ մուրճի եւ մանգաղի պատկերով կարմիր դրօշը: 1800 հոգուց բաղկացած Ֆրանսահայ ներգաղթեալների առաջին խմբի մուտքը Խորհրդային Հայաստան նշանաւորուեց մի կարեւոր իրադարձութեամբ եւս, նրանք իրենց հետ նոյն շոգենաւով Հայրենիք տեղափոխեցին Հայ երաժշտական մշակոյթի երախտաւոր Կոմիտասի աճիւնը:[10] Նոր Արաբկիր աւանի հիմնադրման 40-ամեակին նուիրուած տեղեկատուի 1965 թ. 65/66-րդ համարում լոյս տեսած «Փառապանծ 40 տարի», «Նոր Արաբկիրի 40 տարին», «Բոցավառ ողջոյներ Նոր Արաբկիրի 40-ամեակին» վերտառութեամբ յօդուածները պատմում եմ Խորհրդային Հայաստանում եւ միութեան նստավայրերում անցկացուած տօնական միջոցառումների մասին: Նոր Արաբկիրի 40-ամեակը տօնուեց աննախադէպ շքեղութեամբ: Ցատուկ օրուայ առթիւ ձեւաւորուեց յոբելեանական յանձնաժողով: Երեւանում միջոցառումների մեկնարկը տրուեց Նոր Արաբկիրի Ալիւմինի գործարանի մշակութային պալատի ընդարձակ սրահում պետական եւ մշակութային գործիչների ելոյթներով: Հայրենական մամուլը առաջին հայրենաշէն աւանի 40-ամեակին նուիրուած անդրադարձերում Նոր Արաբկիրի կառուցումը որակեց Հայաստանի նորագոյն պատմութեան խորհրդանշական էջերից մեկը: «Հայրենիքի ձայն»ի տեղեկատուի 1965-1966թթ. 65/66-րդ համարում վերատպուած յօդուածում Նոր Արաբկիրի 40-ամեակը մեկնաբանւում է որպէս հայ ժողովրդի դարաւոր պատմութեան համար աննախընթաց մի երեւոյթ ազգահաւաքի սկիզբ, որի առաջամարտիկները դարձան արաբկիրցիները:[11] Ուշագրաւ է տեղեկատուի այս համարում տպագրուած Վազգէն Ա. Կաթողիկոսի կոնդակը յղուած Ամերիկայում Արաբկիրցիների միութեանը, որում շնորհակալութիւն է յայտնում Մայր Աթոռի տպարանին կատարած 10.000 դոլար հանգանակութեան համար եւ նշում, որ Հայոց Հայրապետը միշտ աղօթում է միութեան հայրենանուէր գործերի համար: Այս համարում «մրցանակաւոր բանաստեղծին ազնիւ արարքը» վերտառութեամբ մի շատ հետաքրքիր բովանդակութեամբ յօդուած կայ, որ պատմում է Թեքէեան վարժարանին ծագումով արաբկիրցի, բանաստեղծ, հրապարակախօս, թարգմանիչ Վահագն Դաւթեանի գրական մրցանակի համար ստացած 375լ.ոյ. հոնորարի նուիրաբերութեան մասին: Յօդուածում լոյս է տեսել Վահագն Դաւթեանի Գերսամ Ահարոնեանին ուղղուած նամակը, որտեղ ընդգծելով Թեքէեան մշակութային միութեան կողմից վարժարանի նոր շէնք կառուցելու նախաձեռնութիւնը բանաստեղծն ասում է. «...Լսել եմ, որ Թէքէեան մշակութային միութիւնը դպրոցական նոր շէնք է կառուցում, եւ եթէ չեմ սխալւում, այդ կապակցութեամբ հանգանակութիւն է կազմակերպւում: Շատ

10 Նոր Արաբկիր տեղեկատու, Զ տարի, ապրիլ, ֆ.11, 1936, Նիւ Եորք, էջ 171-173:

11 Նոր Արաբկիր տեղեկատու, 1965-1966 դեկտեմբեր-մայիս, թ. 65/66, էջ 11:

եմ խնդրում յայտնել մրցանակաբաշխութեան յանձնաժողովին, որպէսզի մրցանակով ինձ տրուելիք դրամական պարգեւը յատկացնի վերոյիշեալ դպրոցի շինարարական ծախսերին: Կարծում եմ, որ այդ դրամը առաւել օգտակար նպատակի ծառայել չի կարող: Թող դա էլ իմ մասնակցութիւնը լինի ձեր հայրենասիրական վսեմ գործին...»: Բանաստեղծի այս քայլը որակուեց Նոր Արաբկիրի 40-ամեակի առթիւ:

Երբ 1927-1928 թթ. Խորհրդային Հայաստանը ընդունում է գաղթականների առաջին խմբին, որոնց Խորհրդային Հայաստանում «Հայրենադարձ» էին անուանում, (250հոգի կամ 68 ընտանիք)[12] եւ փաստացի սկսւում է վերաբնակեցման գործընթացը, թերթի տեղեկատուական դաշտը ընդլայնւում է: Հերթական համարներում տպագրւում են առաջին վերաբնակեցուածների տպաւորութիւնները, մանրամասն նկարագրւում են բնակարանային պայմանները, արաբկիրցիների առօրեան, տնտեսական զբաղմունքները: Ըստ թերթի փոխանցած տեղեկութիւնների բնակարանների գեռակշիռ մասը կրկյարկանի էին, քարաշէն, գլսից եւ ներսից սպիտակ ծեփով պատուած: Տեղեկատուում տպագրուած «Ակնարկներ վկայութիւններ Նոր Արաբկիրի մասին» շարքը բաւականին մանրամասն նկարագրում է Նոր Արաբկիրի ընտանեկան կենցաղը, որից տեղեկանում ենք, որ բնակարանները կոկիկ էին, մաքուր, յարդարուած տնհրաժեշտ կենցաղային պարագաներով երկաթէ մահճակալներ, ծածկոցով ծածկուած բրդէ անկողին, օժիտի ուունգուկ, փայտէ մի քանի աթոռ խոհանոցում, լուսածքի ջուրը տաքացնելու համար նախատեսուած պղնձէ կաթսայ եւ այլն:[13] Հոգեկան անկորը վնրագտած արաբկիրցին հիւրասէր ու մարդամօտ էր եւ իր տուն մտած հիւրին առանց սառը թան եւ տնամերձում աճեցրած վարունգ հիւրասիրելու հրաժեշտ չէր տալիս, իսկ յատուկ առիթներին արաբկիրցիների սեղանը զարդարում էին չորացրած թութն ու նուշով զարդարուն պատուհը: Վերաբնակեցուած արաբկիրցիների արհեստների մասին խօսելիս տեղեկատուի 1928 թ. առաջին համարում[14] հետաքրքրականն այն է, որ թոնրում հաց թխելը եւ այն վաճառելը ներկայացւում է որպէս արհեստ եւ նկարագրւում է հետեւեալ կերպ. «...արաբկիրցների մի փոքր խումբ Երեւանում ընտրել էին մի քանի թաղեր եւ թոնրի հաց էին վաճառում: Ժամանակի ընթացքում գործն այնպէս է կանոնակարգւում, որ վերածւում է արհեստի»:

Նոր Արաբկիրը գնալով գեղեցկանում եւ առաւել բարեկեցիկ պայմաններ էին ստեղծւում բնակչութեան համար: Յուսուածքեղէնի արտելի վարչութեան նախագահ տիկին Մարի Խերբեկեանի 1957 թ. 48-րդ համարում տպագրուած յուշերում նշում է, որ Արաբկիրն ունի տնամերձ պարտէզներով 5000 ից աւելի բնակելի տուն եւ պլանաւորած փողոցներ: 25.000 պատանիներ եւ աղջիկներ սովորում են ցերեկային եւ գիշերային դպրոցներում: Արաբկիրում են գործում Կանեպի, Քանաքեռի էլեկտրակայանի, էլեկտրոլամպերի, Ժամացոյցի, ամանեղէնի, կահոյքի եւ Գինու գործարանները, իսկ արտելներից Արաբկիրի «Գործուածքային», կօշիկի «Հայրենիք» Զէյթունի «Արագած», ինչպէս նաեւ կահոյքի, կոճակի արտելները: Արաբկիրը կապուած է Երեւանի հետ էլեկտրաքարշով, տրոլլիբուսներով, տաքսիներով, որոնց միջոցով 10-15 րոպէի ընթացքում կարելի է հասնել քաղաք: Այժմ արաբկիրցու ապրելակերպը

12 Նոր Արաբկիր տեղեկատու, Բ տարի, յուլիս, հ.1, 1928, Նիւ Եորք, էջ 3,4:

13 Նոր Արաբկիր, Ի տարի, Նոյեմբեր, հ. 26, 1926-1954թթ., Նիւ Եորք, էջ505:

14 Նոր Արաբկիր, Ա տարի, [illegible]իս, Բ [illegible]ի, հ 1, 1928, Նիւ Եորք, էջ 6-7:

եւ մասաւոր զարգացուածութիւնը բոլորովին այլ մակարդակի վրայ է: Նշում է նաեւ, որ ընակարանները աւելի յագեցուած են դարձել անհրաժեշտ կահկարասիներով, գրեթէ բոլոր տներում ռադիօընդունիչներ կան եւ հեռախօսներ, ոմանց բնակարաններում նաեւ հեռուստացոյցներ:[15] Իսկ 1985թ. 50,51-րդ համարներում «Արաբկիր եւ իր բարքերը» գլխագրի ներքոյ տպագրուած նիւթը արաբկիրցիների ժողովրդական հաւատալիքների մասին հետաքրքիր մանրամասներ է հաղորդում, որոնք իրենց դրսեւորումներն էին գտնում տօնների չրջանակում: Ըստ տեղեկատուի փոխանցած նիւթի, տեղեկանում ենք, որ արաբկիրցիները տօնում էին ազգային տօնացոյցի գրեթէ բոլոր տօները, իհարկէ իրենց յատուկ որոշ առանձնայատկութիւններով:

Տօնածիսական այս ակնարկում նկարագրուած է սպասքի կիրառական մի շատ հետաքրքիր առանձնայատկութիւն, երբ Մեծ պահքին ընդառաջ պղնձէ կաթսաների մէջ եռացող մոխրաջրերի մէջ խոհանոցային սպասքը լուացել են իւղից եւ կերակուրների հոտից ազատուելու նպատակով: Լուացել են նաեւ սպասքի համար նախատեսուած սրբիչները, որոնք «գէշնէ» են կոչուել:[16] Հետաքրքիր է նաեւ Տեառնընդառաջին մոմերով զարդարուած սեղանի կենտրոնում պղնձէ պնակի մէջ բամբակի վրայ սպիտակ լցնելու եւ այրելու սովորոյթը, որը կապւում է քրիստոնէութեան ընդունելութեան եւ մեղքերի քաւութեան հետ: Ննջեցեալների հոգիների մեղքերի քաւութեան համար Տեառնընդառաջի կէսգիշերին տանիքների վրայ ձողերին կապած կաշուէ լաթերի այրումը եւ «մեռելոց – մեռելոց» վանկարկումները նոյնպէս արաբկիրցիների ժողովրդական հաւատալիքների մաս են կազմել: Տեղեկատուի էջերից տեղեկանում ենք նաեւ Ծաղկազարդին հեթանոսական սովորոյթների հիմքով տօնուող, գարնան զարթնանքը խորհրդանշող «խժկի[17] հանդէսէի մասին, որի ժամանակ կլայեկած կոնքերի մէջ երիտասարդները խակ պտուղներ եւ մետաղադրամներ են լցրել, այնուհետեւ կոնքերի չուրջը երգել, պարել, ուրախացել եւ եթէ հակառակ սեռի երիտասարդներին պատկանող կոնքերի մետաղադրամները մտցեցել են իրար, հաւատացել են, որ կամուսնանան եւ երջանիկ կը լինեն: «Արաբկիր եւ իր բարքերը» գլխագրի ներքոյ տեղեկատուն ներկայացնում է նաեւ արաբկիրցիների բարբառային բառարանի հատուածներ: Բացի հասարակական կենցաղի նկարագրութիւնից, թերթի 1958 թ. 50-րդ եւ 1965 թ. 65/66-րդ համարներում տպագրուած նիւթը փաստում է, որ Ամերիկայում արաբկիրցիների միութիւնը կարեւորելով արաբկիրցիների նիւթական մշակոյթի պահպանութեան եւ հանրահռչակման գործը սերտ համագործակցել է Հայաստանի պետական պատմական, այժմ Հայաստանի պատմութեան թանգարանի հետ՝ նրան ի պահ յանձնելով «Նոր Արաբկիր տեղեկատուէ» տպագրուած համարները, ինչպէս նաեւ արաբկիրցիների կենցաղի ու մշակոյթի մասին պատմող ազգագրական իրերի մեծ հաւաքածու: Հետաքրքիր է թերթում տպագրուած թանգարանի տնօրէն Կարօ Ղաֆթարեանի եւ թանգարանի գրադարանի վարիչ Թերեզա Ղազարեանի 1958թ. մարտի 5-ին միութեան Նիւ Եորքի մասնաճիւղի քարտուղար Արմենակ Անանմնանին ուղղուած նամակը, որի միջոցով թանգարանը շնորհակալութիւն է յայտնում Ամերիկայի արաբկիրցիների միութեանը եւ տեղեկացնում, որ թերթի համարները գրանցուել են թանգարանի գրադարանի կրացուցակում: Իսկ թանգարանի գիտաշխատող Նադիկ Աւագեանի միութեան

15 Նոր Արաբկիր տեղեկատու, թ. 48, 1957 էջ 1703-1709

16 Նոր Արաբկիր տեղեկատու, թ. 50,51 էջ

17 Խակ թուք

նուիրատուութեանը անդրադարձած յօդուածում մանրամասն նկարագրւում է մանուշակագոյն, թաւշէ, ոսկեթել ասեղնագործութեամբ կիսաճաքաւոր բարձրակրունկ կօշիկները եւ ազգային հագուստը, բրդէ գունաւոր թելերից գործուած Արաբկիրում յայտնի դերձակ Գեւորգ Ճիներ-ճեանի կողմից գործուած գօտին, 19-րդ դարով թուագրուած ճանաչուած պղնձագործներ Ջորեպանեանների պատրաստած պղնձէ գաւաթները, թասերը, ափսէները:

Պատմական Արաբկիր գաւառը իր համանուն քաղաք կենտրոնով գտնուել է Արեւմտեան Հայաստանի Խարբերդի գաւառի Հիւսիսային, Սեբաստիայի գաւառի Հարաւարեւելեան եւ Երզնկայի գաւառի Հարաւարեւմտեան մասում[18], որտեղ Հայերը, որպէս էթնիկ միաւոր իրենց թուաքանակով գերակշիռ են եղել, մինչեւ թուրք եւ քուրդ խուժանի կողմից անընդհատ շարունակուող ջարդի, թալանի, կրօնափոխութեան, ինչի տրամաբանական շարունակութիւնը դարձաւ 1915 թ. Մեծ եղեռնը: Արաբկիրի Հայութեան ջարդերի մասին վկայութիւնները պատմում են. «... Արաբկիրի կեանքը էսպէս օր մը պաղ, օր մը տաք կ'ընթանար երբ արդէն կը թեւակոխենք 1893-1894 տարեշրջանները: Կը սկսին լսուիլ կոտորածի շշուկները Սասունէն, Վանէն: Շատ չանցած սասունցի մաս մը գաղթականներ Արաբկիր հասան: Նրանք պատմեցին ահաւոր կոտորածին մանրամասնութիւնները՝ մանուկներու ողջ – ողջ այրուիլը, հորերուն մէջ լեցուիլը: Անոնք արաբկիրցիներուն անհաւատալի կը թուէին մինչեւ եկաւ 1895 թուականը. հոկտեմբերի 25-ին Արաբկիրի ջարդը սկսաւ...»[19]: Արաբկիրի ջարդերը լայն արձագանք գտան: Ականատեսների պատմութիւններն ու նամակները թարգմանուեցին օտար լեզուներով, որպէսզի աւելի լայն մասսաներին իրազեկեն կատարուածի մասին: Նեւշատելի Շուէյցարիայի օգնութեան կոմիտէի 1897թ. Հայերի օգտին կատարուած աշխատանքների մասին յայտարարութեան մէջ ասւում է, որ ջարդերին յաջորդած ձմեռը յատկապէս դաժան է եղել ողջ մնացածների համար, որոնք կենտրոնացել են մի քանի կանգուն մնացած տների մէջ: Մենդի, անկողնու պակասութիւնը, տիֆի համաճարակը եւս ջարդերից փրկուած 500 արաբկիրցու կեանք են խլել, եւ ըստ Շուէյցարիայի օգնութեան կոմիտէի փոխանցած տեղեկութեան, Արաբկիրում պատկերն այսպիսին էր. 1425 այրուած տուն, 664 կանգուն տուն, 1171 հոգի սպանուած, 1137 այրի կին, 1843 որբ:[20] 1915թ. ապրիլին Արաբկիրի Հայութիւնը կրկին խաղաղ օրեր չապրեց: Կառավարութիւնը սկսեց երիտասարդ տղամարդկանց ձերբակալութիւնները եւ բնակչութեան բռնի տեղահանութիւները: Հայրենիքից ստացուող լուրերը յուսահատեցրին դեռեւս 1895-ին Ամերիկայ արտագնայ աշխատանքի մեկնած արաբկիրցի երիտասարդութեանը ոչնչացնելով տուն վերադարձի բոլոր յոյսերը: Եւ այսպէս աշխարհի տարբեր ծայրերում ձեւաւորուեցին արաբկիրցիների միութիւններ, որոնց նպատակը Հայրենիքին աջակից լինելն էր: Թերթի ուսումնասիրութիւնը ցոյց տուեց, որ այն աւելին էր, քան ուղղակի իրազեկման աղբիւր: «Նոր Արաբկիր տեղեկատու»ն գաղութահայութեան ոգեշնչումի, համախմբուածութեան, Հայրենիք սփիւռք միասնականութիւնը ապահովող մի շղթայ էր դարձել եւ ուղղիղ կապուած էր Խորհրդային Հայաստանում խմորուող Հայրենադարձութեան գործընթացի հետ: Անցնելով տարիների

18 **Արման Սահակեան**, *Արաբկիր սանջակի հայ բնակչութեան թուաքանակը XIX դարի վերջին և XX դարի սկզբին*,- Հայոց պատմութեան հարցեր, հտ. 9, Երևան, 2008, էջ155:

19 **Անդրանիկ Փոլատեան**, *Պատմութիւն հայոց Արաբկիրի*, Նիւ Եորք, 1969, էջ 666:

20 **Անդրանիկ Փոլատեան**, նշ. Աշխ.էջ701:

քննութիւնը՝ պարզ դարձաւ, որ տեղեկատուի ստեղծումը միութեան ազնիւ նպատակներից մեկն էր: Բոլորին հասկանալի, պարզ լեզուով, բայց որ ամենակարեւորն է անկողմնակալ տարներ շարունակ թերթը գրեց, արձանագրեց պատմական իրողութիւնները, լուսաբանեց յայտնի ու անյայտ արաբկիրցիներին, նիւթական ու հոգեւոր արժէքները՝ դառնալով միութեան հայրենանուէր գործի սպասարկողն ու խօսնակը: